Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

«ԽԱՂԱՂ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ ԱՏՈՄԱՅԻՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ԱՆՎՏԱՆԳ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ(փաստաթղթային կոդ՝ Կ-353-12.11.2019-ՏՀ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունները ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
1.	ՀՀ կառավարություն	Նախագծի վերնագիր	Նախագծի վերնագրում «փոփոխություն» բառը փոխարինել «փոփոխություններ» բառով՝ հաշի առնելով, որ փոփոխություններ կատարվում են Նախագծի 1-ին եւ 4-րդ հոդվածներով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
2.	ՀՀ կառավարություն	Նախագծի բոլոր հոդվածներ	Նախագծի հոդվածները նշել փոքրատառերով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
3.	ՀՀ կառավարություն	Նախագծի վերնագիր	Նախագծի վերնագրում սահմանված երկրորդ «Հայաստանի Հանրապետության» բառերը հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասը: Նույն առաջարկը վերաբերելի է Նախագծի 1-ին հոդվածում օրենքի վերնագրից հետո նշված «Հայաստանի Հանրապետության» բառերին:	Ընդունվել է:	Ընդունվել է:

4.	ՀՀ կառավարություն	Նախագծի 3-րդ հոդված	Նախագծի 3-րդ հոդվածով նախատեսված լրացմամբ սահմանվում է, որ ատոմային էներգիայի օգտագործման բնագավառում կարգավորող մարմինը լիցենզիա է տալիս ռադիոակտիվ թափոնների **վերամշակման, պահման** համար: «Նորմատիվ իրավական ակտերի մասին օրենքի» 16-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջներին համաձայն՝թվարկված բոլոր պայմանների առկայությունը պարտադիր է, երբ նշված նորմի կիրառումը պայմանավորված է միայն ստորակետներով բաժանված պայմաններով: Արդյունքում ստացվում է, որ գործունեության նշված տեսակի լիցենզիան միայն պահման կամ միայն վերամշակման համար չի կարող տրամադրվել: Մինչդեռ «Լիցենզավորման մասին» օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի աղյուսակի 13-րդբաժնի 7-րդ կետում որպես լիցենզավորման ենթակա գործունեության տեսակ սահմանված է ռադիոակտիվ թափոնների վերամշակումը **կամ** պահումը, ինչից բխում է, որ «կամ» շաղկապով թվարկված պայմաններից միայն մեկի առկայությունը բավարար է	Ընդունվել է:	Ընդունվել է:

			լիցենզավորման համար: Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասը, նորմատիվ իրավական ակտերի միջեւ համապատասխանություն ապահովելու նպատակով, առաջարկում ենք Նախագծի 3-րդ հոդվածում նախատեսված լրացման մեջ ստորակետը փոխարինել «կամ» շաղկապով:		